ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

N Ժ-66
«28» հուլիսի 2016 թ.

ՀՀՇիրակի մարզ գ.Հայկավան
հեռ. /0312/ 6-00-04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2016 թվականի հուլիսի 26-ի արտահերթ նիստի թիվ 31-Ն որոշումը :

Առդիր՝ 2 թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Ս.ՄԽՈՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 7770-16
28. 07. 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 31-Ն

26 հուլիսի 2016 թվական գյուղ Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 37-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի 2016 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 37-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Երրորդ եռամսյակի եկամտային մասում

1) «Ընդամենը եկամուտներ» տողի 23487.0 հազար (քսաներեք միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար) դրամ թիվը փոխարինել 21687.0 հազար (քսանմեկ միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար) դրամ թվով:
2) «Հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար» տողի 3021.6 հազար (երեք միլիոն քսանմեկ հազար վեց հարյուր) դրամ թիվը փոխարինել 2021.6 հազար (երկու միլիոն քսանմեկ հազար վեց հարյուր) դրամ թվով:
3) «Գույքահարկ փոխադրամիջոցների համար » տողի 1678.5հազար (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) դրամ թիվը փոխարինել 1178.5 հազար (մեկ միլիոն հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) դրամ թվով:
4) «Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վճարներ » տողի 1089.0 հազար (մեկ միլիոն ութսունինը հազար) դրամ թիվը փոխարինել 789.0 հազար (յոթ հարյուր ութսունինը հազար) դրամ թվով:

2. Երրորդ եռամսյակի ծախսային մասում

1) Վարչական բյուջեի «Ընդամենը ծախսեր» տողի 41655.2 հազար (քառասունմեկ միլիոն վեց հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր) դրամ թիվը փոխարինել 39855.2 հազար (երեսունինը միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար երկու հարյուր) դրամ թվով:

2) «Պահուստային միջոցներ » 4891 հոդվածի 5757.0 հազար (հինգ միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար) դրամ թիվը փոխարինել 3957.0 հազար (երեք միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար) դրամ թվով:

3)Ֆոնդային բյուջեի «Շենքերի և շինությունների կառուցում»տողի 5112 հոդվածի 14368.0 հազար (տասնչորս միլիոն երեք հարյուր վաթսունութ հազար) դրամ թիվը փոխարինել 13755.0 հազար (տասներեք միլիոն յոթ հարյուր հիսունհինգ հազար) դրամ թվով:

3) «Այլ մեքենաներ և սարքավորումներ»տողի 5129 հոդվածի 0.0 (զրո) դրամ թիվը փոխարինել 613.0 հազար (վեց հարյուր տասներեք հազար) դրամ թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (5) Դեմ՝ (0) Չեռնպահ՝ (0)

Մկրտիչ Ավետիսյան

Սպարտակ Եդոյան

Անդրանիկ Մարտիրոսյան

Սամվել Բաղդասարյան

Աշոտ Մանուկյան

ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐ՝ Ս.ՄԽՈՅԱՆ

26 հուլիսի 2016 թվական

գյուղ Հայկավան